20.12.2022թ. ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՈՐՈՇՈՒՄ թիվ 481001/09

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ԳՈՐԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ես՝ ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության պետ Արման Մնացականյանս, քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ 43796 գործը,

ՊԱՐԶԵՑԻ

Անհատ ձեռնարկատեր Նարինե Մանուկյանը (ՀՎՀՀ՝ 47967317, հասցե՝ Արարատի մարզ, համայնք Արարատ, Արազի փող. 11շ., բն. 2) ՀՀ Հարկային օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետում չի ներկայացրել 2022թ. սեպտեմբեր ամսվա ԱԱՀ-ի և ակցիզային հարկի հաշվարկը, որի համար նախատեսվում է պատասխանատվություն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169[1] հոդվածի 2-րդ մասով:

Պատշաճ ծանուցված լինելով արձանագրության կազմման, գործի քննության վայրի և ժամանակի մասին, ակտի հասցեատերը ներկայացրել է առարկություն առ այն, որ զբաղվում է գրիչների ձեռագործ արտադրությամբ և իրացնում է բացառապես իր կողմից արտադրված արտադրանքը և հանդիսանում է միկրոձեռնարկատրության սուբյեկտ, ուստի չի ներկայացրել 2022թ. սեպտեմբեր ամսվա ԱԱՀ-ի և ակցիզային հարկի հաշվարկը:

Գործի քննության ընթացքում կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզ է դարձել, որ Նարինե Մանուկյանը պարտականություն չի կրում ներկայացնելու 2022թ. սեպտեմբեր ամսվա ԱԱՀ-ի և ակցիզային հարկի հաշվարկը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով այն հանգամանքը, որ սույն գործով բացակայում է իրավախախտման դեպքը և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 244[2] հոդվածով, 247-րդ հոդվածի 1-ին մասով, 281 հոդվածով և 282 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Նարինե Մանուկյանի նկատմամբ իրականացվող վարչական վարույթը կարճել:

ՀՀ ՊԵԿ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ Ա.ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ